

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
մայիսի 16-ի N 518 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2003 թվականի
ապրիլի 23-ի N 572 - Ն որոշման

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

I. ՆՊԱՏԱԿԸ

1. Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույցի (այսուհետ՝ զեկույց) նպատակներն են՝

1) պետական ծառայողների վարձատրության համակարգերի և աշխատավարձերի չափերի վերլուծությունը.

2) քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը կարգավորող օրենսդրության վերլուծությունը.

3) քաղաքացիական ծառայողների աշխատանքի խթանման և արդյունավետության բարձրացման նպատակով քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

II. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

2. Զեկույցի նախապատրաստման փուլերն են՝

1) պետական կառավարման համապատասխան մարմիններից պետական ծառայողների վարձատրության համակարգի մասին տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

2) քաղաքացիական ծառայության համակարգում աշխատողների շարժի ու հոսունության մասին տվյալների ստացումը և վերլուծությունը.

3) քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը կարգավորող օրենսդրության վերլուծությունը.

4) աշխատավարձի վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա ներդրված տեղեկատվական շտեմարանի վարումը.

5) անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից ստացված՝ ոչ պետական հատվածի 2000 գործատուի կողմից (յուրաքանչյուր մարզից միջինը 100 և Երևան քաղաքից՝ 1000) սահմանված աշխատավարձերի չափերի ուսումնասիրությունը.

6) քաղաքացիական ծառայողների և ոչ պետական հատվածի աշխատողների միջին աշխատավարձերի համեմատական վերլուծությունը՝ ըստ քաղաքացիական ծառայության ոլորտում գերիշխող մասնագիտությունների և քաղաքացիական ծառայության համակարգում առկա պաշտոնների խմբերի.

7) վերլուծությունների հիման վրա քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

III. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Ջեկույցում ներկայացվում են հետևյալ հիմնական բաժինները՝

1) քաղաքացիական ծառայողների աշխատավարձի գնողունակության և աշխատավարձի մակարդակի վրա ազդող մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփ վերլուծություն.

2) պետական ծառայության աշխատավարձերի չափերը և դրանց փոփոխության դինամիկան նախորդ երեք տարիների կտրվածքով, այդ թվում՝

ա. միջին աշխատավարձը պետական ծառայության համակարգում,

բ. միջին աշխատավարձը քաղաքացիական ծառայության ոլորտում ըստ պետական կառավարման մարմինների, ըստ վարչատարածքային միավորների,

գ. քաղաքացիական ծառայության ոլորտում գերիշխող մասնագիտությունները և միջին աշխատավարձն ըստ մասնագիտությունների,

դ. նվազագույն և առավելագույն աշխատավարձը պետական կառավարման համակարգում,

ե. միջին աշխատավարձն ըստ քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերի.

3) քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգի, ինչպես նաև վարձատրության համակարգը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության մասին եզրակացությունը.

4) քաղաքացիական ծառայողների և ոչ պետական հատվածի աշխատողների աշխատավարձի միջին չափերի վերլուծություն՝ ըստ համադրելի պաշտոնների և քաղաքացիական ծառայության համակարգում գերիշխող մասնագիտությունների.

5) քաղաքացիական ծառայողների վարձատրության, շարժի և հոսունության փոխառնչությունների վերլուծություն.

6) քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության վերաբերյալ առաջարկություն.

7) բազային աշխատավարձի առաջարկվող չափի ֆինանսական գնահատականը:

4. Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի չափը նախորդ տարվա նկատմամբ անփոփոխ մնալու դեպքում չեն ներկայացվում զեկույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված վերլուծությունը և ցուցանիշները:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ